№ 42. Կիրակի դեկտեմբերի 25 1866 № 42.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունվարը քաղաքում՝ 2 ման. 50 կոպ., գուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթում հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցումն: «Վաճառականը» 1867 թվին: Տէրութենի կարգադրութիւնները: Տորգեր եւ ուրիշ յայտարարութիւններ: Թիֆլիսի համար մաքուր ջուր պատրաստելու մասին: Թաղաւորական բանկի Թիֆլիսի բաժանման կանոններից քաղված: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւն:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ:

Էս № ով վերջանում է մեր գազեթի 1866 թվի շրջանը և 1867 թվի յոնվարից մենք մտնելու ենք „Վաճառականի„ հրատարակելու երկրորդ շրջանը: Բայց մինչև էն ժամանակը մենք յիշեցնում ենք դրսի քաղաքներից՝ Շուշու, Աքուլիսի և Ախալքալաքի մեր գազեթի մէկ քանի ստորագրվողներին, որ նրանք իրանց վրայ մնացած 1866 թվի „Վաճառականի„ փողերը հասցնեն մեզ: Թէպէտ մենք էդ յիշեալ քաղաքներումը նամակագրութիւն արինք էդ փողերի մասին, բայց մինչև էսօր պատասխան չենք ստացած նրանցից և հենց էդուր պատճառով է, որ հիմի մեր խնդիրը կրկնում ենք նրանց վերջին անգամ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ„ 1867 ԹՎԻՆ:

Ինչպէս հրատարակել էինք „Վաճառականի„ 30-դ № ումը 1867 թվին „Վաճառականը„ կտրվի էնպիսի թերթերի վրայ, որ տարին հիմիկվան 4 կէս թերթի տեղ 5-ից մինչև 6-ը լինի իր սեծութենով: Գալ տարվան ստորագրվողները կստանան ձրիաբար „Առևտրական բառարան„, որի մէջ ամփոփված կլինին թէ առուտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: 1867 թվին „Վաճառականի„ մէջ կտպվին շարունակ ամեն նուսերումը „Ռուսաց տելեգրաֆի ընկերութենից„ ստացած թէ առուտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: „Վաճառականի„ գինը գալ տարի թէ քաղաքում և թէ դուրսը կլինի 5 մ. Գալ տարի „Վաճառականը„ կգուրս գայ հինգշաբթի օրերով:

Հիմիկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքում՝ „Վաճառականի„ խմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի գրատանը, իսկ օտար քաղաքացիները պէտք է դառնան ուղղակի „Վաճառականի„ խմբագրողին էս հասցէով՝ „Վաճառականի„ խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը„, իսկ Ռուսերէն՝ „Редактору Тифлисскаго Торговаго листка Егору Тер-Александрову въ Тифлисѣ„.

Խնդրում ենք 1867 թվի մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ որքան կարելի է կարճ միջոցումը, որ կարողանանք ստորագրվողների թվի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիոնեթի Ախմէթ գիւղումը 1867-ից իջարով է տվվում էնտեղի եկեղեցական երկու այգին, մէկ ջրաղացը և 8 օրվան վարուցանի գետինը: Էդ իջարի համար տորգ է նշանակված էս դեկտեմբերի 28-ին Թիֆլիսի դաւառի եկեղեցական կայքերի կառավարող նադվորնի սովետնիկ Արժևանիձէի մօտ:

Մի և նոյն անձնի մօտ էս դեկտեմբերի 28-ին նշանակված է Թիոնեթի Ախմէդ գիւղի մէջ գտնված եկեղեցական այգու և

վարուցանի 5 օրավար գետնի 1867 թւից իջարով տալու տորգը։

Մի և նոյն անձնի մօտ էս դեկտեմբերի 28-ին նշանակված է Թիօնեթի Ախմէդ գիւղի մէջ գտնված եկեղեցական այգու և երկու օրավար վարուցանի գետնի 1867 թւից իջարով տալու տորգը։

Քութայիսի գաւառական կառավարութիւնումը 1867 թւի յունվարի 9-ին նշանակված է Քութայիս քաղաքումը 150 բանտարկվածների համար քար ու կրէ բերդ շինելու տորգը։ Էդ գործի համար նշանակված է 60,804 մ. 40 կ։

Թիֆլիսի գաւառական կառավարութենումը 1867 թւի յունվարի 26-ին նշանակված է գուբերնսկի սեկրետար Նիկողայոս Գաւթեան Թամամշեանցի Թիֆլիսի 3-դ մասի 3-դ կվարտալումը գտնված և 6000 մ. գին դրած այգու ծախելու տորգը։

Թիֆլիսի նահանգական դատարանումը 1867 թւի յունվարի 31-ին նշանակված է Թիֆլիսի քաղաքացի Յակոբ և Ափրիամ Բախտողլեանցների Թիֆլիսի 2-դ մասի 3-դ կվարտալումը գտնված 600 մ. գին դրած տան ծախելու տորգը։

Կովկասեան Պրիկազումը 1867 թւի մարտի 20-ին նշանակված են հետևեալ տների ծախելու տորգը 1.) կանցելեարիստ Պետր Աղնիեվի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 1-ին մասի 3-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 9000 մ., 2.) Գրիգոր Առաքուլեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 800 մ., 3.) Հանգուցեալ Սոսի Աթոյեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 1-ին մասի 2 կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 2300 մ., 4.) կոլեժսկի ասեսորի աղջիկ Երմիոնիա Շավրովի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 4-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 5250 մ., 5.) Սոսի Գրիգուրեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 500 մ., 6) Յովհաննէս և Գէորգ Բուղդնեանցների տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 3-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 600 մ., 7.) Մովսէս և Պետրոս Մխիթարեանցների տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն 6,500 մ., 8.) Խաչատուր Յարութիւնեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 3000 մ., 9.) Նինո Բաղիարովի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 2-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 1200 մ. և 10.) Քրիսեա Արուլաձէի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 1-ին մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 2800 մ։

Կովկասեան Պրիկազումը 1867 թւի ապրիլի 24-ին նշանակված է հետևեալ տների ծախելու տորգը՝ 1.) Խոսյ Բանդուրալեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 2-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 1050 մ., 2.) Գրիգոր Խվանովի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 4-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 2250մ. և 3.) գեներալ-մայոր իշխան Մակար Ջամբակուրեան-Օրբելեանու տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 1-ին մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 40,000 մ։

Կովկասեան Պրիկազումը 1867 թւի ապրիլի 3-ին նշանակված է հետևեալ տների ծախելու տորգը՝ 1.) Շտաբս-կապիտանի կին իշխանուհի Նինո Փավլենովի Գուշեթի Շաչաբուրօ անունով գիւղի մէջ գտնված կայքը, որի Պրիկազի պարտքն է 1500 մ., 2.) կոլեժսկի ասեսոր Միրման Ամիրեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 1500 մ., 3.) Քրիսեա Խասևի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 600 մ., 4.) Գուրգէն Օսեփեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 1-ին մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 2500 մ., 5.) Գէորգ Շաքարեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 2-դ մասի 4-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 1100 մ., 6.) Աւետիք Թուդուննեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 3-դ մասի 1-ին կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 1000 մ., 7.) Աւետիք Մեծուրձևեանցի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 4-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 3500 մ., և 8.) Իվան Գոլանովի տունը, որն որ գտնվում է Թիֆլիսի 4-դ մասի 2-դ կվարտալումը և սրա Պրիկազի պարտքն է 2000 մ։

Գորու նահանգական դատարանումը 1867 թւի ապրիլի 3-ին նշանակված է հետևեալ կայքերի ծախելու տորգը՝ 1.) Հանգուցեալ պորուչիկ իշխան Պաատա Ցիցիանովի Դոսսի գիւղումը գտնված կայքը, որն որ Կովկասեան Պրիկազին պարտ է 3000 մ., 2.) պըրապորշչիկ իշխան Բեժան Էրիսթովի Բրանաչաանթ Սոփելի, Սամցխիսօ, Բաջխանթ, Սոփելի, Սաուրի, Գուդաանթ Սոփելի, Խաշիրաանթ Սոփելի, Ջեմօ Էրմանի և Խարիկոմ անուններով գիւղերումը գտնված կայքերը, որոնց վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 12,000 մ., 3.) պոդպոլկովնիկ իշխան Գրիգոր Էրիսթովի Նիգոզի անունով գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 3000 մ., 4.) աղնիւ Գէորգի, Սամսէ և Զուրաբ Քարսիձէների Նիգոզի անունով գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 3300 մ. և 5.) պրապորշչիկ Եսակով և Եվստաֆի իշխան Էրիսթովների Ցոդանթկարի, Սիգվա, Բաղինի, Կերա, Ժավանթկարի և Քվէմոկորաւէթի անուններով գիւղերումը գտնված կայքերը, որոնց վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 4500 մ։

Թելավա-Սղնախի նահանգական դատարանումը 1867 թւի ապրիլի 24-ին նշանակված է հետևեալ կայքերի ծախելու տորգը՝ 1.) աղնիւ Իվան և Ալէքսանդր Անդրոնիկովների Օժիօ գիւղումը գտնված կայքը, որն որ Կովկասեան Պրիկազին պարտ է 2,500 մ., 2.) Աղնիւ Նիկոլայ և Ռևազ Անդրոնիկովների Օժիօ գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 3000 մ. և 3.) Աղնիւ Բեսարիոն Ավալովի կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 1560 մ։

Թելավա-Սղնախի նահանգական դատարանումը 1867 թւի ապրիլի 3-ին նշանակված է հետևեալ կայքերի ծախելու տորգը՝ 1.) Հանգուցեալ պորուչիկ իշխան Մամուկա Ջերքեզովի Ջալուրի անունով գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 3200 մ., 2.) Իշխան Անդրոնիկ Անդրոնիկովի Գուրջանի, Վեջինի, Ջիարի և Կողալի անուններով գիւղերումը գտնված կայքերը, որոնց վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 12,700 մ., 3.) Իշխան Թաղթօ և Թամազ Ջերքեզովների Ջալուրի գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 2450 մ. և 4.) Իշխան Սեմեոն Բերուբօ-Վաչնաձէի Բակուրցիխի անունով գիւղումը գտնված կայքը, որի վրայ Կովկասեան Պրիկազի պարտք կայ 5,500 մ։

Երևանի գաւառական կառավարութիւնումը 1867 թւի մայիսի 3-ին նշանակված է Թիֆլիսի քաղաքացի Մովսէս Միրիմանեանցի Երևան քաղաքումը գտնված և 1672 մ. գին դրած 13 դուքանի ծախելու տորգը։

3.) Վիլնո . . . . 3 —
4.) Վլադիմիր . . . . . . —
5.) Վոլոգդա . . . . . . — —
6.) Վորոնեժ . . . . . . — —
7.) Վեատկա . . . . . . — —
8.) Եկատերինոբուրգ . . — —
9.) Եկատերինոսլավլ . . — —
10.) Իրկուտսկ. . . . . 6 —
11.) Ղազան . . . . . 3 —
12.) Կամենեց-Պոդոլսկ. . — —
13.) Քիշնեօվ . . . . . — —
14.) Կիեվ . . . . . . — —
15.) Կրասնոեարսկ . . . 6 —
16.) Կուրսկ . . . . . 3 —
17.) Միտավա . . . . . — —
18.) Մոսկով . . . . . 3 —
19.) Օդեսա . . . . . . — —
20.) Օրեօլ . . . . . . — —
21.) Պենզա . . . . . . — —
22.) Պսկով . . . . . . — —
23.) Ռիգա . . . . . . — —
24.) Ռոստով Դոնի վրայ . 2 —
25.) Ռեազան . . . . . 3 —
26.) Սամարա . . . . . — —
27.) Սարատով . . . . . — —
28.) Պետերբուրգ . . . . — —
29.) Տամբով . . . . . — —
30.) Տվեր . . . . . . — —
31.) Տոմսկ. . . . . . 6 —
32.) Ուֆա . . . . . . 3 —
33.) Խարկով . . . . . — —
34.) Եարոսլավլ . . . . — —

Բաց ի էդ նարմարկաների ժամանակը՝

Իրբիտ . . . . 4 մ.
Նիժնի-Նովգորոդ . . . 3 —
Պալտա[illegible] . . — —
Մորշան[illegible] . . — —

6.) Է[illegible]ոնք որ փող ունին վճարել[illegible]ն բանկին, նրա կան-տորան[illegible]ւմներին մուրհակնե-րով փ[illegible] լրացնելու համար, նմանա[illegible]ն դանձարանից (со-хранн[illegible]ուած փողերի համար, կարող[illegible]ելու փողերը ներ-կայացնել Թագաւորական բանկի Թիֆլիսի բաժանումը։ Եւ էդուր համար բանկի բա-ժանումը տալիս է փող ներկայացնողին ոչ թէ փոխանցելու տոմսակ, այլ հասարակ ստացաթուղթ և ստանում է փոխանցելու համար $^1/_8$ $^0/_0$։ Փողի վճարողները պէտք է աչխատեն փողերը նշանակած ժամանակից առաջ ներկայացնել բանկի բաժանումը, էնպէս որ բանկի բաժանումը կարողանայ մինչև ժամանակի լրանալը իմաց տալ փողի ստա-նալու մասին ումն որ պէտք է։

---

5. Շահով փող տուն տանելու մասին։

Թագաւորական բանկի Թիֆլիսի բաժա-նումը ընդունում է շահով փող անժամա-նակ, իսկ ժամանակով փողերի ընդունելու պարտաւորութիւնը մնում է Կովկասեան Պրիկազի վրայ։

1.) Անժամանակ, այս ինքն մինչև պա-հանջելը, տուն տարած փողերի համար բան-կի բաժանումը, մինչև նոր կարգադրութիւն-ները, տարին 3 $^0/_0$ է տալիս։

2.) Ամեն փող տուն տանողին հաշւա-տետրակ է տվւում, որի մէջ գրվում է նրա տուն տարած և ստացած փողը։ Հաշւա-տետրակը բացառապէս գրվում է անձնի կամ տեղի անունով և էդուր համար պէտք է նրա տէրը ներկայացնէ և կամ ուղարկէ յայտա-րարութիւնը իր ստորագրութենով։ Ան-չափահասների ծնողները և հոգաբարձուները կարող են տուն տանել և ստանալ փողերը անչափահասների անունով։ Ամեն մարդ կարող է ուրիշի անունով փող տուն տանել և հաշւատետրակ ստանալ, բայց էդ փողերի յետ ստանալու համար պէտք է ներկայանայ էն մարդը, ում անունով գրված է հաշւա-տետրակը։

3.) Հաշւատետրակի տալիս տուն տանե-լու փողը պէտք է 100 մանեթից պակաս չլինի, իսկ մի և նոյն անձնի հառեեալ տուն տանելու փողերը կարող են լինիլ ոչ պակաս 30 մանեթից առանց կոպեկների։ Արդէն հաշւատետրակ ստացած մարդու տուն տանելու փողերը կարող են ընդունվիլ և ու-րիշ մարդուց, առանց պահանջելու փողատի-րոջ յայտարարութիւնը և ստորագրութիւնը։

4.) Իւրաքանչիւր տուն տարած փողի շա-հը հաշւվում է, փող տուն տանելու ամսի հե-տեեալ ամսի 1-ից և մինչև էն ամսի 1-ը, երբ որ փողատէրը ուզում է յետ ստանալ փողերը, էնպէս որ փողատէրը ստանում է իր փողի շահը ամբողջ ամիսների համար միայն։

Շահը հաշւվում է բոլոր փողատէրերի հա-մար տարվայ վերջին մինչև դեկտեմբերի 31-ը և էդ օրից յետոյ շահը գրվում է փողատի-րոջ հաշւումը։ Եթէ փողատէրը իր ժամա-նակին պահանջէ և իր հաշւատետրակը ներ-կայացնէ կարելի է շահը աւելացնել նրա դրամագլխին։ Էս կերպով դրամագլխին չա-ւելացած շահը, որն որ համնելու է փողա-տիրոջը մինչև անցկացած տարվայ դեկտեմ-բերի 31-ը, պահվում է բանկի բաժանման մէջը և տվւում է փողատիրոջը առանց շահի, երբ որ նա պահանջէ։

Փողի տուն տանելու և պահանջելու ժա-մանակը հաշւվում է բանկի բաժանմանը յայ-տարարութիւն տալու և փողի ստանալու օրից։

(Կշարունակվի)

Կովկասեան փոխարքան Թիֆ-լիսումը։ Նորին Կայսերական Բարձրու-թիւն Կովկասեան փոխարքայ Միխայիլ Նի-կոլայեվիչը և նրա ամուսին Մեծ Իշխանուհի Օլգա Ֆեօդորովնան էս ամսի 21 ին, չորեք-շաբթի օրը կէսօրից յետոյ 2 ժամ և 45 րոպէ անցկացած մտան Թիֆլիս և վեր եկան իրանց համար նոր շինած պալատի մէջը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Լիվերպուլ դեկտեմբերի 4։

Էսօր 10,000 հակ բամբակ ծախ-վեցաւ։ Միջին Ամերիկայի տեսակի գինն է 14 $^1/_2$ պէնս։

Պետերբուրգ դեկտեմբերի 6։

Կուրսը Լօնդոնի վրայ $31^1/_2$ պէնս։
Պարիժի վրայ . . $328^1/_2$ սանտիմ։
5% Կատարեալ ~~առաջին փոխա~~-ռութենի տոմսակները $113^3/_4$ մանէթ։
—Երկրորդինը . . . $106^1/_2$ մանէթ։
Ոսկին . . . . . . 6 մ. 25 կ.

Թիֆլիս, դեկտեմբերի 24։

Շաքարը Ֆրանսիացոց	9 մ.	70	կ.
— Ռուսինը . .	10 մ.	45	կ.
Արծաթը 84% .	225 մ.		—
— 72% .	55 մ.		—
Ոսկին	6 մ.	40	կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Դուրս եկաւ Պ. Հ. Էնֆիաճ-եանցի և ընկ. տպարանից առան-ձին տետրակով „Վաճառական-նից,, դուրս տրված „ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ,, և ծախվում է Պ. Ս. Էնֆիաճեանցի գրքա-տանը հատը 20 կոպեկով։ Տարը օրինակից աւելի առնողներին կպակասացնվի 20%։

Дозволено цензурою
декабря 25 1866 г.

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

Խմբագրող և հրատարակիչ
Գ. Տէր Աղէքսանդրեանց։